ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆ

30.01.2015 21:42

Գյումրի քաղաքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործով տուժողների իրավահաջորդներ Եգոր Ադամյանը, Լուսինե Ավետիսյանը և Ռիտա Պետրոսյանը դիմել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանին՝ անվճար հիմունքներով իրավաբանական օգնություն տրամադրելու հարցով:
Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալի 30.01.2015թ. որոշմամբ տուժողների իրավահաջորդներ Եգոր Ադամյանին, Լուսինե Ավետիսյանին և Ռիտա Պետրոսյանին տրամադրվել է հանրային պաշտպան:
Հաշվի առնելով փաստաբանների արձագանքները տուժողների իրավահաջորդներին պաշտպանելու հարցում, մյուս իրավահաջորդների շահերի պաշտպանությունը կկազմակերպվի կամավոր հիմունքներով ներգրավվող փաստաբանների միջոցով:
Վերոհիշյալ քրեական գործով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը ապահովելու է մեղադրյալի և տուժողների իրավահաջորդների հանրային պաշտպանների աշխատանքային անկախությունը և ազատությունը՝ շահերի բախումների հնարավորությունը բացառելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
մամուլի ծառայություն

Առաջարկվող նորություններ

20.10.2014ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ

29.10.2014
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

30.10.2014ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ‘ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ’ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

07.11.2014ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ Է ‘ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ’ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })